




Երեւոնյա այսպէս

**ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԷ ԷՀՏԻԱԾԵՒ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ցանուն Յօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ.
ամեն:

Մեծարգո՛ւ Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրեցա՛լ եղբայր Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ,

հոգեւոր հայրե՛ր, հարգելի՛ պետական այրեր,

սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Հայաստանի Հանրապետության 25-րդ տարեդարձի նկիրական առիթով ողջունում եւ Մեր շնորհավորանքներն ենք բերում ձեզ եւ հավատացյալ համայն Մեր ժողովրդին: Այսօր սրբազան այս կամարների ներքո ձեզ հետ միասին գոհաբանական աղոթք բարձրացրեցինք առ Աստված՝ հայրենի մեր Երկրի խաղաղության ու բարօրության համար: Մեր երախտագիտությունը հայտնեցինք Երկնավորին, որ ազատ կյանքի պարգեն եւ շնորհել մեզ: «Փա՛րջ Զեզ, Աստուած, փա՛րջ Զեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՛րջ Զեզ» (ժամագիրք):

Մեր ժողովուրդը երկար է մաքառել՝ հայրենի հողում անկախ պետականության վերա-

կանությունների 20-ին, Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի առիթով, Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց Հանրապետական մաղթանք՝ հանդիսացնելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, ներկայությամբ 33 նախագահ Մեր Սարգսյանի:

Արարողությանը ներկա էին նաեւ 33 ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, 33 Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության միաբաններ, պետական այրեր, բարերարներ ու հասարակական գործիչներ:

Արարողության ընթացքում Հայրապետները ծնրադիր ընթերցեցին «Գոհնամք զԶեն» աղոթքը՝ հայեցելով, որ Աստված Իր ամենախնամ ս. Աջի հովանու ներքո պահի ու պահպանի Հայաստանի Հանրապետությունը եւ համայն հայոց ազգը:

Արարողության ավարտին Կաթողիկոսներն իրենց օրհնությունն ու պատգամը հղեցին համայն հայ ժողովրդին:

կան ողորմության լիությունից եւ արժանի դարձրեցիր վերակերտելու անկախ մեր պետականությունը: Փա՛րջ Զեզ, Տէ՛ր, որ անհաղթա-հարելի թվացող փորձությունների մեջ Զո տուր Ասկանը ապավինած մեր ժողովուրդը հերոսաբար պայքարեց ու ամրացրեց հիմքը մեր պետության, շարունակեց ապրել ու բարին արարել եւ իր արդար իրավունքները պաշտպանել: Այսօր հպարտ ենք անկախ պետականու-

նաչանքն ու մեր արդար դատի հաղթանակի համար:

Այս ձեռքբերումներով հանդերձ՝ անցած 25 տարիները բավական չեղան պետականակենտրոն համապարփակ մտածողություն կերտելու, թերություններն ու բացթողումները լիովին սրբագրելու, ամբողջովին լուծելու ընկերային եւ տնտեսական խնդիրները, որոնք հանգեցնում են անկտառիության, անհանդուրժողության կամ անտարբերության դրսեւորմանը, լարված իրավիճակների, երբեմն նաեւ՝ մարդկային ցավալի կորուստների:

Սիրելիներ, հակառակ բոլոր մարտահրավերների ու դժվարությունների՝ վերելքի բարի ու արժանավոր ուղի ենք անցել, եւ մեր առջեւ երկրի հզորացման նույնքան պատասխանատու եւ պատվավոր պարտավորությունն է: Առաջալը պատգամում է մեզ. «Գնա՛ արդարության, հավատի, սիրո, խաղաղության եւ սրբության հետեւից» (Բ Տիմ. Բ 22): Այս արժեքներն են կերտում աստվածապատկեր նկարագիրը մարդու, բարձրացնում հասարակությունների կյանքը եւ անսասան պահում պետությունների հիմքը: Հայրենիքում եւ Սփյուռքում ամեն օր մեր կյանքով ու գործերով հաստատենք, որ կրողն ենք այս առաքինությունների, որ սիրում ենք մեր երկիրը եւ ունենք ներուժը դիմագրավելու բոլոր մարտահրավերները՝ պահպանելով մեր կյանքն արդարության, խաղաղության, սիրո ու միասնության շավիղներում: Միշտ հիշենք՝ միայն համախմբվածությամբ է հնարավոր ի-

րագործել հզոր հայրենիքի մեր տեսիլքը, միայն օրինահարգությամբ, արդարասիրությամբ, ծառայանկիրմով, հանձնառություններով ու գոհողություններով կարող ենք ծաղկեցնել մեր կյանքը եւ ամուր ու հաստատուն պահել մեր պետականությունը: Միայն հզոր պետություն ունենալով՝ կարող ենք սատար կանգնել Սփյուռքի մեր համայնքներին, ազգային ինքնության պահպանության իրենց նկիրական ջանքերին եւ նեցուկ լինել ներդրությունների մեջ հայտնված մեր ազգի զավակներին:

Այս պահին, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, երբ մենք գոհաբանական աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ մեր Անկախության 25-ամյակի առիթով, հոգու պարտք ունենք մեր խոսարհույնը բերելու խնկելի հիշատակին մեր հերոս զավակների, ովքեր իրենց կյանքն ընծայեցին հայրենիքին, խոսարհում բերելու բոլոր նկիրյալներին, ովքեր ջանք ու եռանդ ներդրեցին, քաջություն ու կրողով դրսեւորեցին մեր պետականության վերահաստատման ու կայացման համար:

Ուրախ ենք, որ այսօր Հանրապետական մաղթանքը կատարեցինք Մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի հետ՝ աղոթակցությամբ հավատավոր մեր զավակների, հոգեւոր հայրերի եւ պետական այրերի՝ ի զույն Հայաստանի Հանրապետության Նախագահի տիար Մերժ Սարգսյանի: Մեր եկեղեցին վասն հայրենյաց հանապազօրյա իր աղոթքով եւ իր ամեն կարելիությամբ շարունակելու է սատար կանգնել մեր պետությանը՝ հանուն մեր երկրի առաջընթացի ու մեր ժողովրդի բարօրության:

Աղոթում ենք, որ ամենագործ Աստված Իր սուրբ Աջով պահպանի լինի եւ անվորով խաղաղություն ու բարի առաջընթաց պարգևի մեր երկրին, ուժ եւ կրողով՝ հայրենի իշխանություններին, շնորհ եւ օրհնություն՝ համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ զորացնելու մեր հայրենիքը եւ պայծառացնելու ազգային կյանքը:

«Կեցո՛, Տէ՛ր, զժողովուրդս Զո եւ օրհնեա՛ր զժառանգութիւնս Զո, հովուեա՛ր եւ բարձրացո՛ր զոսա յայսմիւնտ սինկն եւ յալիւտեան».



կանգնման համար: Այսօր ունենք 25-ամյա նորատունկ մեր հանրապետությունը, որը հույսերի մարմնացումը, սերն ու հպարտությունն է մեր ժողովրդի: Երիտասարդ է մեր պետությունը, բայց նաեւ կայացած է այնքան, որպեսզի կարողանա իրականության առաջնորդել մեր ժողովրդի ձգտումները, ազգային զարթոնքի տեղիքները:

Պետականության կայացման ճանապարհը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, հեշտ չորվեց մեզ: Մեր ժողովուրդը դիմագրավեց բազում դժվարությունների ու նեղությունների, մինչ օրս շարունակվող չքրափակմանը, Արցախի ազատագրության պայքարում մեզ պարտադրված պատերազմին, ներքաղաքական կյանքի ցնցումներին: Ամենածանր իրավիճակներում, մեր պետականությանը սպառնացող բոլոր վտանգների ու փորձությունների առջեւ, հաղթանակող եղան առ հայրենի մեր ժողովրդի անմաքցող սերն ու նկիրումը, իր ազատ, իր կյանքը կերտելու տեսիլքը: Փա՛րջ Զեզ, Տէ՛ր, որ մեր սիրույ լցրեցիր Զո ամենաբավա-

թյան ձեռքբերումներով, մեր քաջարի բանակով ու անմահ հերոսներով, անկախության արժեքն իրենց հոգիներում կրող մեր նոր, լուսավոր սերնդով: Այսօր թոթափած անաստվածության լուծը՝ գործարկում է եւ՝ հոգեւոր կյանքը մեր ժողովրդի: Կառուցվում ու շենհանում են մեր սրբատեղիները, քրիստոնյա կրթվում մեր զավակները: Հայրենի անկախ պետականությունը աշխարհասփյուռ մեր ժողովրդին հնարավորություն է ընձեռել դրսեւորելու իր միասնականությունը, հայրենաշեն ծրագրերի եւ ազգային իդձերի շուրջ համախմբվելու: Ներուժը: Բոլոր ժամանակներում, բայց մասնավոր անկախության տարիներին, Սփյուռքի սիրտը ջերմորեն բաբախել է հայրենիքի համար, որի վկայությունն են աշխարհի չորս ծագերում ապրող մեր զավակների հայրենանպաստ բազում գործերը: Մեր պետությունը, արդարեւ, ամուր հենարան է՝ համազգային մեր իդձերի իրագործման, Արցախում մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքի եւ Հայոց ցեղասպանության միջազգային ճա-



Ամենայն հայոց Կաթողիկոսն այցելեց ծննդատներ



Սեպտեմբերի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրելիս
Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց
Կաթողիկոսն այցելեց Էջմիածնի եւ Շրեանի
ծննդատներ՝ հայրապետական իր օրհնությունը
բերելու և որոշածներին՝ ՀՀ անկախության 25-րդ
տարեաւարձի առիթով:

Երեւանում Ամենայն Հայոց Հայրապետը, ՀՀ առողջապահության նախարարի պաշտոնակատար Արմեն Մուրադյանի ուղեկցությամբ, այցելեց Հանրապետական կլինիկական ծննդատուն:

Շնկատան առջե Գարեգին Բ Հայրապետին հիմնավորեց ծնկատան բուժանձնակազմը՝ գլխավոր բժիշկ, ՀՀ ԱԼ գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ, ՀՀ ԳԱԿ թղթակից անդամ Ռազմիկ Աբրահամյանի գլխավորությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախ այցելեց ծննդոտանա նորածնների բաժին, ուր հարձր քա-
նեց եւ օրհնեց իրդեյանական այս օրերին ծն-
ված մանուկներին, ապա գրեցեց երիտասարդ
մայրերի հետ՝ Նրանց բերելով իր օրհնությունն
ու գնահատանքը: Հարբերին Բ Կաթողիկոսը
շփոխակվեցեց եւ մասնակոր իր օրհնությունը
վերահանցեց նաեւ Մարիամ Թուկայան, ու ՀԲ
ԱԼ պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ
գինեկոլոգիայի խիստուտուտ ու սպեցիալիզացի-
ալաւա ը լույս աշխարհ բերեւ:

Այսուհետև Ամենայն Յայոց Կաթողիկոսը գրույց ունեցավ 33 առողջապահության նախարարի պաշտոնակատարի, ծննդատան գլխավոր բժշկի եւ բուժանձնակազմի հետ: Նորիս Սրբությունը, կարեւորելով բժշկի առաքելությունը,



իր գնահատանքը հայտնեց նրանց՝ իրենց ազգոգուտ եւ նվիրյալ ծառայության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեցեց նաեւ Հանրապետական կլինիկական ծննդատան շրջափառով գտնվող մատուռուը, ուր աղոթք բարձրացրեց հայրենիքի անասանությունն եւ նորածինների խաղաղ ու բարօր կյանքի համար: Նորին Սրբաբլթոնը մատուռին կիրիցէ ա. Աստվածածնի սրբակար:

Նույն օրը Գարեգին Բ Կաթողիկոսը եղավ
Էջմիածին քաղաքի կենտրոնական հիվանդա-
նոցի ծննդատանը:

Գլխավոր բժիշկ Լիլիթ Գասպարյանի ուղեկցությամբ՝ Նորին Սրբությունն այցելեց Նորածիններին եւ Նրանց մայրերին, օրհնեց եւ աղոթեց Նրանց քաջառողջության եւ երջանկության հա-

մար: Վեհափառ Հայրապետը ծանոթացավ նաեւ
ծննդատան պայմաններին:

Մանկատանը այցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի եւ ԵՀԻ «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի կողմից բոլոր նորաժնիկներին ու նրանց մայրերին բաշխվեցին սկզբներ:

Լորին Մարթուրյանն ուղեկցվում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպ. Կոնյանը, Մայր Աթոռի դիվանագիտ կղզակ առաջատույանը, Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քհն. Մանգասարյանը եւ «Կլոր սեղան» հիմնադրափոխ տնօրեն ղոկոսորդ Կարեն Նազարյանը:



Սեպտեմբերի 14-ին Լ. Ս. Օ. Տ. Տ. Ֆարեգին Բ Շայրագյույն Պատրիարք եւ Ամեայն Յայոց Կաթողիկոսի հանխապետությունը տեղի ունեցավ Աշտարակի հայոցայաց տան բացման աւարտողությունը: Այն Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հովանւոյ ներքո գործող ութերորդ հայոցայեւ տունն է, որն ամբողջությամբ հիմնադրուել է «Գուլամիուրն» հիմնադրամի միջոցներով:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին վանորդիք տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը եւ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովհաննես եպս Հակոբյանը:

Հայրորդյաց տան մուտքի մոտ Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Արագածոտնի թեմի առաջնորդ Սփարոյի եպս Պռոշյանը, հայրորդյաց տեքի հոգեւոր տեսուչ Կոմիտաս վրդ. Հովնանյանը, թեմի հոգեւոր սպասավորներ,

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ եւ հա-
յորդյազ տան սաներ:

«Գուլափիրյան» հիմնադրամի նախագահ տիար Մայլը Հարաթունյանը եւ նրա տիկին Մարի Հարաթունյանը կտրեցին մուտքի կարմիր ժապավենը եւ «Հրաշխափառ» երգեցողության ներքո, Նորին Սրբուլայան գլխավորությամբ, ներկայանալով մուտք գործեցին հալոոյալ տուն:

Կատարվեց նորաբաց հայրուղիայց տան օրհնության կարգ, որից հետո Նորին Սրբությունը եւ հյուրերը շրջեցին կրթական հաստատություն՝ ծանոթանալով հայրուղիայց տան պայմաններին, այցելեցին դասաստնակներ, ծանոթացան ասկետի ճեմքի աշխատանքներին:

Ապա հայորդյաց տան դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն, որը բացվեց Կոմիտաս վրո. Հովհաննեսի ողջույնի խոսքով: Հայորդյաց տների հոգեպետ տեսույր, իր ուրախությունը



ԱԶՏԱՐԱԿԻ ԽԱՅՐՐԴՅԱԳ ՏԱՆ ԲԱՑՈՒՄԸ

հայտնելով երկու տարվա տրեւաջան աշխատանքից հետո հայորդայաց տան բացման առիթով, ի մասնավորի ընդգծեց, որ հայորդայաց տունն այս վայրն է, որտեղ ձեռնարկվում է վաղվա լավ ու արժանապատիվ հայը: Հայր Գովհար լսածու Նաեի իր երախտագիտութլունը հայտնեց Վեհափառ Հայրապետին, «Գովափրյան» իմաստորամբն եւ նրա Նախագահին՝ Աշտարակի մատուցելու համար լրթական պատճառ պայմաններ տնտեսելու նպաստագոյութլան:

Այդուհետև հաճախ ելան հայրողաց տան պարսյին եւ ժողովրդական գործիքների խմբերը։
Ասումկերի ելույթներից հետո իր սրտի խոսք ներկայատերի փոխանցեց Աշտարակի քաղաքապետ Արմեն Անտոնյանը՝ կարեւորելով Աշտարակի կյանքում հայրողաց տան բացումը։ Զարաթաշտեղ շնորհակալություն հայտնեց

գամով: Նորին Սրբությունը համոզում արտա-
հայտեց, որ կերպարանափոխված եւ ամբող-
ջապես բարեկեցիկացած հաստատության մեջ
մասնակալաժնեւրը նոր խանդավառությամբ
կկատարեն իրենց աշխատանքը, որն ուղղված
է մանուկների լավագույն վարքչութեւն:

Վեժմաժա Քարյապետն արդըզով հիշեց Գուլամարյան ընտանիքին, որ իր կարողություններն ի պայա արեց հայրենիքին և ժողովրդին՝ իր օրհնությունը բերեց «Գուլամարյան» հիմնադրամի նահապետ տիրա Մայլե Քարյապետյանին, ով համաարարիվ Գուլամարյան ընտանիքի տեղիքին՝ հսնձ առավ հիմնադրամի միջոցները նպատակարարդեղ այս օրհնյալ ու շուրհապա գործին, օրհնեց նաե հանդիսությունը երկեպ Մար Քըզդի բաերտարներին, որոնց թվով Սիմա և Իմաժ Տա-Սոնեհանյան օրուեղ



Նեց Նորին Սրբությանը՝ Աշտարակին նման արժեքավոր հաստատություն պարգևելու համար:

Իր խոսքը ներկաներին ուղղեց նաև «Գուլաժիրյան» իմմանարափ մասնագիտ տխրաՄայր Հարությունյան՝ մեծ աստիճանով նկատելով բացման արարողությանը ներկա գտնվելը և արձանագրեց այն հսկայական փոփոխությունները, որ տեղ էին գտել երկու տարիների ընթացքում: Պրն Հարությունյանը, կարելու էր հայտարարել տների առաքելությունը հայ մասնուկների կրթության և դաստիարակության գործում, ինչեղ Գուլաժիրյան ընտանիքի այցը Հայաստան և հանդիպումը Հայցը Հայրապետի իր հետ, որ արդյունքում ուղղակիորեն այլը, յուլեսնալով զգալիորեն, ազգայն կայացրեց իր փոքրեկներ ուղղել ի նպաստ Հայաստանի մասնուկների տարբեր ծրագրերի իրականացմանը: Հանդիսությունն ամփոփվեց Գաբրիել Բ Ամենյան Հայոց Կաթողիկոսի օհնուհանությամբ պատարա:

րին, Կիրակոս Գույումճյանին՝ շնորհակալություն հայտնելով ազգային կյանքի շինության գործում իրենց կողմից ներդրվող շանքերի եւ միջոցների համար: Նորին Սրբությունը ողջու-
նեց Լաւե ԱՄՆ հայոց արեւելյան թմին «Հայ օգ-
նության ֆոնդի» տնօրէն Գառնիկ Նահապույա-
ւի նետաւորութունը:

Վեհապառ Պապականության հայտնվելուց Աշտարակի քաղաքապետի¹ հայորդյաց տան խնդիրներն նկատմամբ եղանակաբանական քննարկումներ անցկացրելու համար, իր օրինակներով բաշխել հայորդյաց տան աշխատակազմի² տնօրեն Կարինե Վեդուկյանի գլխավորությամբ, ովքեր անսպալար կ'սկիզբնային, սիրով եւ նախաձեռնությամբ իրականացնում եւ իրենց կրթատարադասական առաքելությունը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրինեց հայորդյաց տան կայացմանը նպաստած անձանց, ինչպես նաեւ՝ հայ ազգային կյանքը շեն ու պայծառ պահելուն ուղղված բոլորի ջանքերը:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում սեղի ունեցավ շխառնանքի հանձնման արարողություն

Սեպտեմբերի 15-ին Պատրիարքի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ն. Ս. Ս. Ս. Պատրիարքի Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ շխառնանքի հանձնման արարողություն:

Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվով բարձր շքանշան հանձնվեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու բարեկամ, հայագետ Հայր Աթոռնա Շառլ Ռոնտի (Ֆրանսիա), ով այս օրերին գտնվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Արեւելյան ծեսի ուսումնասիրության ընկերության 6-րդ միջազգային գիտաժողովի առիթով:

«Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշան շնորհվեց նաեւ Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ ղրկոտր Արմեն Տեր-Կյուրեղյանին:

Պարտությունը բացվեց Տերուհյան անունով, ապա ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի ղիվանատան ներկայացուցիչ հարաբերությունների գրասենյակի տնօրէն Պարույր քնն. Ավետիսյանը:

Մեծարյալների գնահատական գործունեությանն ու վատասակն անդրադարձան Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրէն Շահն ծ. վրդ. Անանյանը և Հայաստանի ամերիկյան համալսարանի փոխնախագահ Աշոտ Ղազարյանը:

Այնուհետեւ Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրէն Մուշեղ եպս Բաբայանը ներկայացրեց տիար Արմեն Տեր-Կյուրեղյանին ուղղված կոնգրակը, որում նշված է. «Ճանաչում եմ Ձեզ անձնապէս և բաշտանք եմ գրգային, հասարակական կյանքում և գիտությունում ու մասնավորապէս ապարեզում Ձեր երկարամյա, արդյունավոր գործունեությանը: Դուք կյանքի ողջ ընթացքում ամբողջական սիրով ծառայում եք սերունդներ կրթե-



լու և դաստիարակելու առաքինի գործին՝ դասավանդելով աշխարհի տարբեր երկրների հանրաժողով կրթաշխններում: Ձեր անհոգնաբեկ ջանքերն ու տարիների վատակը գնահատված են գիտական ու հասարակական ամենաբարձր կոչումներով ու պարգեւներով՝ մեծ հարգանք ու ճանաչում բերելով Ձեզ:

Մեզ համար առանձնակի գոհունակություն է անդրադառնալ Հայաստանի ամերիկյան համալսարանի կյանքում Ձեր գոլարժան վատակն: Հայաստանի անկախության առաջին տարիներին, երբ առկա դժվարությունների ու մարտահրավերների մեջ հիմնարկվեց համալսարանը, Դուք անվճար հետեւողությամբ ջանքեր բերեցիք նրա կայացմանը և Ձեր կարողությունները, հարուստ փորձն ու հեղինակությունը ծառայեցրեցիք կրթաշխնի ազգօգուտ առաքելության արդյունավորմանը...»:

Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան եպս Հակոբյանն ընթերցեց հայր Աթոռնա Շառլ Ռոնտի ուղղված հայրապետական կոնգրակը, որում մասնավորապէս նշված է. «Հոգեշնորհ հայր Աթոռնա Շառլ Ռոնտ, այսօր ուրախ առիթ ունեք անդրադառնալու բազմամաստակ եկեղեցականիդ հովական, քարոզական, գիտական ու մասնավորապէս նկիրյալ գործունեությանը, որ արգասավորված է բարի, օրինաբեր արդյունքներով: Տասնյակ տարիներ՝ որպէս գիւղիորյալ պատասվոր Զրիստոսի Սուրբ Եկեղեցու, Դուք հոգու և մտքի Ձեր կարողությունները անձնավորաբար յայսպէս եք դնում «Կենաց Խոսքը» սերմանելու տերունապատվեր առաքելության իրականացմանը՝ անխախտ հավատարմությամբ պահելով ծառայանվիրումի Ձեր սրբազան ուխտը Բարձրյալ Տիրոջ հետ և ապրելով ու գործելով հավատացելոց հո-

գետր կյանքի վերադարձնելին ավանդ բերելու ազնիվ նախանձանխորությունը:

Առանձնակի գոհունակություն է Մեզ համար, որ Դուք գիտական Ձեր երկարամյա գործունեության մեջ առանձնակի տեղ եք հատկացրել Հայ Առաքելական Սբ Եկեղեցու ծիսական ու դավանաբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը և բազմաթիվ գրքերով ու իրապարակումներով փաստել որանց անմիջական կապը առաքելական ավանդության հետ: Հայ հոգեւորականն ու հավատացալը մշտապէս երախտագիտությամբ պիտի հիշեն մեր Սբ Եկեղեցու անցյալն ու դարավոր հարուստ ծառանկությունը համաշխարհային գիտական և հասարակական լայն շրջանակներին ներկայացնելու Ձեր ջանքերն ու ազնիվ վատակը»:

Կոնգրակների ընթերցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու շքանշաններով զարդարեց մեծարյալների կուրծքը՝ վերստին բերելով նրանց հայրապետական իր օրինությունն ու բարեմաղթանքները:

Այնուհետեւ իրենց սրտի խոսքն ասացին Արմեն Տեր-Կյուրեղյանն ու հայր Աթոռնա Շառլ Ռոնտը՝ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իրենց ընծայված բարձր պատվի համար:

Տերեկույթին երաժշտական կատարումներով հանդես եկան Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի մասնակցի պատանիները՝ ղեկավարությամբ Սիլվա Մեքիսյանի:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պապականի աղոթքով: Պարտությունը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, Արեւելյան ծեսի ուսումնասիրության ընկերության 6-րդ միջազգային գիտաժողովի մասնակիցները, Հայաստանի բուհերի պատասխանատուներ և ներկայացուցիչներ:

Սեպտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Ս. Ս. Պատրիարքի Բ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական օրինության գիր հանձնեց «Հովարդ Պարակետոյան» հիշատակի ընկերակցության տնօրէնների խորհրդի նախագահ տիար Մայքլ Հարաթունյանին՝ ընկերակցության հիմնադրման 95-րդ տարեդարձի առիթով գնահատելով հաստատության գոլարժան վատակն ազգային և հայրենական կյանքում:

Շնորհաբաշխությանը ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի ղիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրէն Պարույր քնն. Ավետիսյանը:

Ընկերակցության հայրենանվեր և ազգակապատ գործունեությանը և անցած 95-ամյա ուղուն մասնավոր անդրադարձ կատարեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Այնուհետեւ «Էջ Միածինն ի Զօրէ» շառականի երգեցողության ներքո բերվեց հայրապետական կոնգրակը, որն ընթերցեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրէն Վարդան եպս Նավասարդյանը:

Գնահատանքի գրում մասնավորապէս ասվում է. «Ընկերակցությունը հիմնվեց Միհրան և Չապէլ Պարակետոյանների կողմից, ունէր ի հաւելածաւունս իրենց հանգուցալ գազակի՝ Հովարդ Պարակետոյանի լուսավոր հիշատակի, հանձն առան իրենց կարողությունները ծառայեցնել Հայոց ցեղասպանությունից մազապղծ մասնուկների փրկության սուրբ գործին: 1921 թվականին՝ մեր պատմության ամենաղծուրդ օրերին, երբ հայրենի հողի վրա ջարդի էր նկարկւում մեր ժողովուրդը, ավերւում էին մեր շենքերն ու բնակավայրերը, քրիստոնաւեր ամուլը եղեռնահար մեր ժողովրդին ծառայելու առաքելությամբ հիմնեց «Դրբանց տուն»-ը, որ նախադրալը հանդիսացավ «Հովարդ Պարակետոյան» ընկերակցության:

Տերապաւնության հաջորդող տարի-

Հայրապետական օրինության և գնահատանքի գիր՝ «Հովարդ Պարակետոյան» հիշատակի ընկերակցությանը



ներին խնամատար հաստատությունը երախտարժան գործունեություն իրականացրեց. տարբեր գալառներից հավաքեց ծնողազուրկ հայորդիներին և հոգ տարավ նրանց սննդի, առողջության, կրթության ու դաստիարակության մասին: Ընկերակցության շնորհիվ մասիակից փրկվեցին հայրուրավոր մանուկներ, ունէր նոր կյանք սկսեցին հաստատության ապահով հարկի ներքո: Հետագայում ընկերակցությունն ընդլայնեց իր գործունեությունը, խնամատարական, առողջապահական ու կրթական հաստատություններ հիմնվեցին Լիբանանում և Սիրիայում՝ տանամայկներ շարունակ արդյունավորապէս ծառայելով մեր ժողովրդի գազակներին:

Գոլարժան է, որ Հայաստանի անկախության առաջին իսկ տարիներից «Հովարդ Պարակետոյան» հիշատակի ընկերակցությունը բարեմիական գործունեություն է ծավալում նաեւ Հայրենի մեր երկրում: Այս տարիների ընթացքում հաստատությունը Հայաստանում և Արցախում հիմնել է մանկական ակնարումական ու առամաբուժական կենտրոններ, Հայաստանի առողջապահական հաստատություններին տրամադրել բժշկական սարքավորումներ ու դեղորայք՝ ծառայեցնելու մեր ժողովրդի կարիքավոր գազակներին: Այսօր համայն մեր ժողովուրդը բարձրորեն գնահատում է «Հովարդ Պարակետոյան» հիշատակի ընկերակցության տարիներին

վատակը, հայոց ազգին մատուցած բարի, աստվածահաճ ծառայությունները:

Ամենայն Հայոց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հայրապետական Մեր օրինությունն եք բերում «Հովարդ Պարակետոյան» հիշատակի ընկերակցության տնօրէնների խորհրդի նախագահ տիար Մայքլ Հարաթունյանին, անդամներին ու նկիրյալ բոլոր աշխատակիցներին»:

Ամենայն Հայոց Հարապետը սրբատառ գրում մաղթել է, որ Աստված միշտ հաստատուն պահի «Հովարդ Պարակետոյան» հիշատակի ընկերակցությունը, և Բարձրյալի օրինությամբ ընկերակցության նկիրյալ աշխատանքը մշտապէս պատկի աստվածօրինալ նորանոր հաջողություններով:

Կոնգրակի ընթերցումից հետո խոսք ասաց խորհրդի նախագահ տիար Մայքլ Հարաթունյանը. «Այս կոնգրակ մեծ պատիվ է մեզ համար և մեծ հարգանքով եք ընդունում այն Մայր Աթոռի սրբազան հողի վրա»՝ անդրադառնալով Պարակետոյան համեստ ընտանիքի շատ կարեւոր ազգօգուտ գործին: Այս առիթով պրն Մայքլ Հարաթունյանը Մայր Աթոռին նկիրեց Պոլսում ընկերակցության կողմից օգնություն ստացած առաջին հայ որբերի խմբանկարը:

Պարտությունն ամփոփվեց Պատրիարքի Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգաւով և աղոթքով:

Մեծարման արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ և բարերար հայորդիներ, «Հովարդ Պարակետոյան» հիշատակի ընկերակցության տնօրէնների խորհրդի անդամներ, աշխատակիցներ և այլ իյուրեր:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

17 սեպտեմբերի

Ֆրանսիայից ժամանած բժիշկներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ճարպագյուլ Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայից ժամանած բժիշկներին խմբին՝ ուղեկցությամբ դոկտ. Փան Պիեռ Բերթելյանի:

Վերջինս Նորին Սրբությանը ներկայացրեց բժիշկների այցի նպատակները եւ հայցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը:

Ողջունելով Ֆրանսիայի բարեկամ ժողովրդի զավակներին այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Նորին Սրբությունը նրանց ցանկացավ հաճելի եւ անմոռանալի օրեր հյուրընկալ Հայաստան աշխարհում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց Ս. Էջմիածնի առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ մասնավորապես կարեւորելով, որ քրիստոնեության ընդունումով ուղեգծվեց հայ ժողովրդի պատմական ընթացքը: Նորին Սրբությունն ընդգծեց Հայոց Եկեղեցու կարեւոր դերակատարությունը ժողովրդի ազգային ինքնության եւ գոյության պահպանության գործում, ինչպես նաեւ անդրադարձավ Եկեղեցու առջեւ ծառայող ժամանակակից մարտահրավերներին եւ ներկայիս հովվական ծառայությանը:

Վեհափառ Հայրապետը, խոսելով ՀՀ անկախության տարիների ձեռնարկած միջպետական հարաբերությունների մասին,

գոհունակությամբ շեշտեց ջերմությամբ եւ բարեկամությամբ հատկանշված սերտ կապերը եւ գործակցությունը Ֆրանսիայի հետ: Գարեգին Բ Կաթողիկոսն արդեօք, որ երկու պետությունների ու ժողովուրդների հարաբերությունները միշտ մնան ջերմ եւ բարեկամական:

Նորին Սրբությունը, ի դեմս պատկառելի խմբի, շնորհակալություն հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին եւ իշխանություններին՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտելու եւ ճանաչելու, ինչպես նաեւ դարաբաղյան հակամարտությունը խաղաղ կարգավորելու գործում գործադրվող ջանքերի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ պատասխանեց բժիշկների հարցերին, որոնք վերաբերում էին Հայոց ցեղասպանության ու խորհրդային տարիների պատճառով Հայոց Եկեղեցուն պատճառված ավերների վերականգնմանը, Հոռմի Կաթողիկ Եկեղեցու եւ քրիստոնեական այլ Եկեղեցիների ու կրոնների հետ Հայոց Եկեղեցու հարաբերություններին, աճող սերնդի քրիստոնեական դաստիարակությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետն արդյունավոր ծառայություն մարդեց բժիշկներին՝ Աստծու գորակցությամբ շարունակ նպաստելու մարդկանց առողջ կյանքի վերականգնմանը:

20 սեպտեմբերի

ՀՀ-ում Իսրայելի դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությունն ավարտող Իսրայելի արտակարգ եւ լիազոր դեսպան Շմուել Մեիրումին: Հանդիպմանը ներկա էին նաեւ Իսրայելի ԱԳՆ Եվրասիայի բաժնի պատասխանատու Ռաֆայել Հարպազը եւ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Չրույցի ընթացքում Նորին Սրբությունը, հրաժեշտ տալով դեսպանին, իր գնահատանքը փոխանցեց նրան՝ պաշտոնավարման շրջանում ի նպաստ երկու ժողովուրդների կապերի ամրապնդման գործարարած ջանքերի համար:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակու-

թյունը հայտնեց երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման կապակցությամբ՝ վստահեցնելով, որ Հայ Եկեղեցու կողմից ամեն ջանք կգործադրվի՝ որանց առավել սերտացման եւ արդյունավորման համար: Մասնավոր անդրադարձ կատարելով երկու ժողովուրդների պատմական առնչություններին եւ ընդհանրություններին՝ Ամենայն Հայոց Հայրապետը հիշատակեց դեռեւս 7-րդ դարում երուսաղեմի Հայոց Պատրիարքության հաստատումը եւ երկրում ձեռնարկված հայկական համայնքը: Այս առիթով Գարեգին Բ Կաթողիկոսն իր երախտագիտությունը հայտնեց Իսրայելի իշխանություններին՝ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Նորին Սրբությունը նաեւ ցավով խոսեց անցյալ դարում երկու ժողովուրդների պատուհասած ողբերգությունների՝ Հոլոքոստի ու Հայոց ցեղասպանության մասին, անդրադարձ կատարեց Սփյուռքում երկու ժողովուրդների զավակների միջեւ ձեռնարկված ջերմ բարեկամությանը:

Իր հերթին դեսպան Շմուել Մեիրումը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ ուշադրության ու ջերմ ընդունելության հա-

մար, եւ ներկայացրեց իր գործունեության ընթացքում արձանագրված ձեռքբերումները:

Հանդիպման վերջում իր բարեմաղախներն ուղղելով պրն Շմուել Մեիրումին՝ Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ դեսպանը կշարունակի իր նպաստը բերել հայ-իսրայելական հարաբերությունների հետագա ամրապնդմանը:

22 սեպտեմբերի

Կանադահայ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց կանադահայ ուխտավորների՝ ուղեկցությամբ Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս. Հովակիմյանին:

ՀՀ անկախության 25-րդ տարեդարձի առթիվ հայրենիք ժամանած հայորդիների ներկայացնելով՝ Աբգար սրբազանը նշեց, որ կանադահայությունը եւ հայոց թեմը մշտապես մասնակից են Հայաստանի սոցիալական, հասարակական ու մշակութային

սիրական եւ հոգեւոր իրենց զգացումները նորոգած՝ պիտի վերադառնան եւ նոր խանդավառությամբ լծվեն իրենց համայնքային կյանքի առաջընթացին:

Անդրադառնալով հայրենիքի առջեւ ծառայած խնդիրներին՝ Վեհափառ Հայրապետը նկատեց. «Ապրել ենք եւ դիմակայել բոլոր դժվարություններին՝ շնորհիվ մեր զորեղ հավատքի, առ հայրենիս ունեցած մեր սիրո»:

Հայրենի երկրի շինության եւ պայծա-



կյանքին՝ սատարելով հայրենիքին՝ առկա խնդիրների հաղթահարման գործում: «Մայր Աթոռը, հայրենիքը ոչ միայն խորհրդանշիչ էր, այլեւ իրական կյանքի իմաստ, որով մեր հավատացյալներն ապրում են», - ասաց սրբազանը՝ ուխտավորների անունից հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունը բերելով ուխտավոր հայորդիներին, բարձր գնահատեց Սփյուռքի եւ մասնավորապես կանադահայության նվիրումն ու սերը՝ հայրենիքի եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հանդեպ: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նման այցելությունները հոգեւոր վերելքի առիթ են հայորդիների համար, որոնք ազգային, հայրենա-

ռացման գործում Նորին Սրբությունը կարելուց աշխարհասփյուռ հայության գործուն ու անմիջական մասնակցությունը:

Հայոց Հայրապետը նաեւ ընդգծեց, որ մշտապես աղոթում է Սփյուռքի իր զավակներին համար՝ հայցելով Տիրոջ օգնականությունն ու գորակցությունը, որ նրանք կարողանան իրենց հավատարմությունը պահել հայրենի սուրբ հողին, ազգային հոգեւոր արժեքներին եւ ապրեն հայաշունչ կյանքով:

Վեհափառ Հայրապետը հորդորեց նրանց նույն հայրենասեր ոգով դաստիարակել նաեւ իրենց զավակներին, ջանքեր գործարդել ամեն կերպ իրենց օգտակարությունը բերելու մայր հայրենիքին եւ Կանադայի հայ համայնքին:

23 սեպտեմբերի

ՀՀ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի

Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիժին:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

23 սեպտեմբերի

ԴՆ-ում Վրաստանի արհապարհ և լիազոր դեսպանին

Ողջունելով Նորաշխարհի դեսպանին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու ժողովուրդների դարավոր ջերմ հարաբերություններին և Հայաստանի ու Վրաստանի միջև առկա գործակցությանը։ Նորին Սրբությունը խոսեց նաև Վրաստանում ապրող հայ համայնքի մասին՝ իր գնահատանքը փոխանցելով վրաց իշխանություններին՝ համայնքի նկատմամբ դրսևորվող հոգատար վերաբերմունքի համար։

Վրաստանի արհապարհի և լիազոր դեսպանի հարաբերություններին և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յոզիանիսյանը։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յոզիանիսյանը։

25 սեպտեմբերի

Արգենտինայի փկանաց միության անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի հայոց թեմի տիկնանց միության անդամներին։

Ողջունելով Բուենոս Այրեսից ժամանած ուխտավորներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը բերեց նրանց՝ ընդգծելով, որ սիրով և կապված արգենտինահայությանը, որը նախանձախնդրորեն շարունակում է ապրել ազգային-հոգեկոչ կյանքով։

Անդրադառնալով Արգենտինա կատարած իր հովվապետական այցելություններին՝ Նորին Սրբությունը նշեց, որ Արգենտինան,

իրեն Սփյուռքի ամենակազմակերպված համայնքներից մեկը, գեղեցիկ վկայություններով է ապրում իր հուշերում։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավոր իր գնահատանքը հայտնեց տիկնանց միության անդամներին՝ կարեւորելով նրանց եկեղեցաբնակ և ազգակապառ գործունեությունը։

Վերջում Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները փոխանցեց Արգենտինայի հավատավոր հայորդիներին՝ հորդորելով միշտ զորեղ մտալ իրենց հավատի մեջ և պահպանել համայնքի հայաշունչ ոգին։

«Շատ ոգեւորված էիք, երբ ձեզ հանդիպեցինք Դադիվանքում և տեսանք ձեր ջերմ վերաբերմունքը, սերս ու նվիրումը ձեր վանքի և ազգային սրբությունների հանդեպ։ Տեսանք, որ ձեր ծնողների թաղ զավակներն էք, որ Նույն Նախանձախնդրությամբ պիտի պաշտպանեք այդ ամենը՝ ձեր հայրենիքը»,- ասաց Նորին Սրբությունը՝ ուրախություն հայտնելով մասնակցների Մայր Աթոռ այցի առիթով։

Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ այս այցը լավ առիթ կդառնա երիտասարդների համար՝ ճանաչելու հայրենիքը, զորանալու իրենց հայրենասիրական զգացումների մեջ և գոտեպնդվելու հավատով։

Նորին Սրբությունը մասնակցների հետ զրուցեց նաև այցի իրենց տպավորություններին։

Արգենտինայի Միսիոնարյան վարժարանի սաներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի Միսիոնարյան վարժարանի սաներին՝ ուղեկցությամբ մայրենի լեզվի ուսուցչուհի տիկ. Չեփյուռ Տիգեյկյանին։

Ամենայն Հայոց Հայրապետը, ծանոթանալով յուրաքանչյուր սանի հետ, իր օրհնությունը բերեց երիտասարդներին, նաև վերհիշեց իր հանդիպումը վարժարանի տեղապետին և աշակերտության հետ՝ Արգենտինա կատարած հովվապետական այցի շրջանակներում։


Նորին Սրբությունը վարժարանի սաներին

ներին և առօրյայի մասին, ամենքին բաշխեց նվերներ։

Եռօրյա այցի ընթացքում պատանիները, մտալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Մայր տաճարում մասնակցեցին Պատարագի արարողությանը, հոգեւորականների ուղեկցությամբ եղան Մայր Աթոռի թանգարաններում և կառույցներում, Էջմիածնի քաղաքի վանքերում և եկեղեցիներում, այցելեցին Փծեղնակաբերդի հուշահամալիր, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Հայաստանի պատմության թանգարան և Հայաստանի ազգային պատկերասրահ։ Տաղանդաշատ մանուկներն ազգային երգի ու պարի կատարումներով մասնակցեցին Էջմիածնի «Հրաչ և Սյուզան Թուֆայան» հայորդյաց տանը սեպտեմբերի 24-ին տեղի ունեցած համերգին։

հետ զրուցեց նրանց ուսումնառության, ինչպես նաև ազգային-եկեղեցական կյանքին մասնակցության մասին։

Հանդիպման անդրադարձ կատարվեց Հոռմի Քահանայապետ Ֆրանցիսկո Պապի՝ Հայաստան կատարած այցին և Հայոց եւ Կաթողիկ եկեղեցիների միջև փոխհարաբերություններին։ Նորին Սրբությունը նաև պատասխանեց երիտասարդների հարցերին, որոնց վերաբերում էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքին, առօրյային և հայրապետական ճամփորդություններին։



26 սեպտեմբերի

Քենթերբերիի Արքեպիսկոպոսի ղաժվիրակի հետ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Քենթերբերիի Արքեպիսկոպոսի պատվիրակ և անգլիկան համայնքի հոգեւոր սպասավոր հայր Ջոն Բարբրին։

Հայոց Հայրապետն իր օրհնությունը բերեց Հայաստանում ծառայությունն ավարտող հայր Ջոն Բարբրին՝ գոհանակություն հայտնելով նրա պատասխանատու հոգեւոր սպասավորության և Հայոց եկեղեցու նկատմամբ ազնիվ ու ջերմ վերաբերմունքի համար։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջողություն և Աստուծո զորակցություն մաղթեց անգլիկան հոգեւորականին՝ իր հետագա

ծառայության մեջ։

Քենթերբերիի Արքեպիսկոպոսի պատվիրակ իր հերթին խորին շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ Հայաստանում իր ծառայության տարիներին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի կողմից ցուցաբերված մշտական աջակցության համար։

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յոզիանիսյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը։



Քարվաճառի շրջանի դուրսգնացողներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախի Քարվաճառի շրջանի ինը գյուղերից ժամանած 24 դուրսգնացողներին, որոնց Արցախ իր այցի ժամանակ՝ սեպտեմբերի 9-ին, Դադիվանքում իրավեց իր ուղղել այցելել Մայր Աթոռ։

Դադիվանքի վանահայր Հովհաննես քն. Հովհաննիսյանը և Դադիվանքի շրջանի վարչակազմի ղեկավար Կարեն Եղիշյանը քարվաճառիցների անունից շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Հայրապետին՝ պատանիներին ուղղված անձնական հրավերին և Մայր Աթոռում ցուցաբերված ջերմ ընդունելության համար, և վստահություն հայտնեցին, որ այդ սերմերն անպայման բարի պտուղներ կան։

Այնուհետև ներկաներին իր հայրապետական օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։



Ս. ԳԵՆՐԳ զորավարի տնին նվիրված հանդիսություն

Սեպտեմբերի 24-ին՝ Ս. Գեորգ զորավարի տոնին, Ն. Ս. Ս. Տ. Փարեգին Բ Շայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախագահությանը, Գեորգյան հոգեւոր ճեմարանի դպիւնում տեղի ունեցավ հանդիսություն: Երջանկահիշատակ Գեորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հիմնադրված ճեմարանը կրում է ս. Գեորգ զորավարի անունը:

Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների տեսչական ու դասախոսական անձնակազմը, ճեմարանի սաներն ու այլ հրավիրյալներ:

Հանդիսությունը, որի ընթացքում նաեւ հանձնվեցին 2015-2016 ուսումնական տարեշրջանի ավարտական լսարանի դիպլոմները, բացվեց Տերունական արդթով, որից հետո հիշեցին Հայաստանի Հանրապետության եւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի օրինելոգները: Այնուհետեւ բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Փարեգին վրդ. Համբարձումյանը:

Խոսքն ուղղելով շրջանավարտներին՝ տեսուչն ասաց. «Շատ հաճախ մենք մոռանում ենք երազի գորույթանքն եւ այն մեծ ազդեցության մասին, որ երազը կարող է ունենալ մեր կյանքի եւ այլոց վրա: Ամեն մի ճեմարանականի երազն է՝ ավարտել ճեմարանը եւ կոչվել ծառայության: Միայն այսօր Ձեր այդ երազն իրականացված է: Դուք այնպիսի կրթություն եք ստացել այստեղ, որը այսօր հնարավորություն է ընձեռնում ձեր ծառայությունը բերելու

մեր Եկեղեցու ամենատարբեր կառույցներում: Վստահ եմ, որ պիտի շարունակեք կերտել ձեր լուսավոր ապագան այն ամուր հիմքի վրա, որ ստացել եք այստեղ:

Բոլորս գիտենք, որ այսօր մեր առաքելությունը մեծ է եւ հայրենիքում եւ սփյուռքում: Երբ մենք նայում ենք մեր շուրջը, տեսնում ենք բազմաթիվ խնդիրներ՝ անբարո վարքի տարածում հասարակության մեջ, քանդված ընտանիքներ, ցասում եւ առեւտրություն... Շատերը կորցրել են իրենց հոգեւոր անդրորդը, ունենք անգամ՝ հավատքն առ Աստված եւ կամքի գործունեությունը՝ անելու արդարն ու ճշմարիտը...

Թերեւս հավատքի վկայության ավելի մեծ օրինակ դժվար պիտի լիներ մեզ գտնելու, քան ս. Գեորգի օրինակը, ու ջրիստոյակի կոչումն իր համար դարձրել էր անուն եւ Աստծո ծառայությունը՝ անկողնում առաքելություն:

Հայր Փարեգինը ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի եւ ուսանողության անունից շնորհավորեց տասնութ շրջանավարտ սարկավագներին՝ մարդեղով, որ Վեհափառ Հայրապետի ձեռքից ստացվելիք իրենց դիպլոմները հոգեւոր ու ինքնակրթական խոր ճամփորդության խթան դառնալ:

Հավարտ հայր սուրբի խոսքի՝ ճեմարանի երգչախումբը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ, կատարեց ս. Գեորգ զորավարին նվիրված շարականը:

Իսկ ճեմարանի դասախոսների անունից խոսեցին Դեմետրի ավգ քհն. Մայիլյանը եւ բ. գ. թ. Լորյան Պողոսյանը:

Այնուհետեւ Փարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2015-2016 թթ. ուսումնական տարվա 18 շրջանավարտներին հանձնեց ավարտական դիպլոմները:

Շրջանավարտների անունից երախտագիտության խոսք ասաց Սամվել սրկ. Պողոսյանը:

Տերեղույթի ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդես եկավ «Ինտեր» լսարանի ինչպեք, որից հետո հանդիսությունը եզրահանգվեց Լորին Սրբության պատգամով եւ օրհնությամբ:

«Տարիներ առաջ հաստատեցինք, որ Ս. Գեորգ զորավարի տնը Նշվի մեր հաստատության հարկի ներքո» իբրեւ Գեորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրության օր: Ս. Գեորգ զորավարի անվամբ է կոչվել այս հաստատությունը՝ երջանկահիշատակ Գեորգ Դ Հայրապետի կողմից: Այսօր մենք փառք եւ գոհություն ենք առ Աստված

րունակվում է. մեր առջեւ նստած են 18 տոր շրջանավարտները:

Այս առիթով Փարեգին Բ Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց ճեմարանի տեսչությանը եւ դասախոսներին՝ իրենց նվիրյալ ջանքերի եւ պտղաբեր աշխատանքի համար: Շրջանավարտներին Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց լինել Տիրոջ այգու արծառավոր մշակներ եւ հոգատարել իրենց խնամքին հանձնվող այգեստանը, որպեսզի բարեբեր պտուղներ պարգեւի: Լորին Սրբությունը հորդորեց՝ նույն փառավոր ավանդների կրող լինելով՝ նոր փայլ եւ պայծառություն հավելն ճեմարանի դարավոր պատմությանը եւ իրենց ձեռքի մեջ փառավորեն հոգեւոր հաստատության անունը:

Նշելով, որ երիտասարդ եկեղեցականները՝ իբրեւ Առաքելական Ս. Եկեղեցու սպասավորներ, դժվարին առաքելություն են ստանձնում, Լորին Սրբությունը Երկնավորի գորակ-



բարձրացնում, որ այս հաստատությունն արդեն 142 տարի իր առաքելությունն է իրականացնում ազգային մեր կյանքում: 142 տարի այն իր հարկից դուրս է բերել լուսավոր ազգային գործիչներ, ովքեր իրենց ծառայությունն են բերել մեր ժողովրդին՝ թե՛ աշխարհիկ եւ թե՛ հոգեւոր հանգամանքի մեջ: ...Փառաշեղ անկեր, որ իրենց լուսավոր հետքն են թողել ազգային մեր պատմության մեջ՝ իրենց վաստակով ու ինքնատիպ դրոշմով: Այսօր այդ ավանդույթը շա-

ցությունը հայցեց նրանք համար՝ բարի ծառայություն իրականացնելու եւ միշտ բարձր պահելու Հայոց Եկեղեցու հեղինակությունը հայոց կյանքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատգամեց գորակա Տիրոջով, հավատքի մեջ ամուր մնալով ու նվիրումով իրականացնել իրենց ծառայությունը Եկեղեցու լուսավոր անդամներ:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատանդի արդթով եւ Հայրապետական մարդեղով:

Վարդապետական թեզի դաշտականություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Սեպտեմբերի 27-ին Գեորգյան հոգեւոր ճեմարանի դպիւնում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն՝ Ն. Ս. Ս. Տ. Փարեգին Բ Շայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր Նախագահությանը:

Մասնավոր վարդապետության աստիճանի համար «Սուրբ Մնայան եւ Հայկոսության տոնը Հայ Եկեղեցու Դ-Ե դարերում» ըստ հայ եկեղեցական պատմագրության՝ թեմայով թեզ պաշտպանեց Մայր Աթոռի միաբան, Լեւիտանի հայոց հոգեւոր հովիվ Տաճատ արքեպիսկոպոսը:

Թեզերի պաշտպանության հանձնախումբը Նախագահում էր Տափուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Փալատյանը: Հանձնախմբի կազմում էին Հիթակի թեմի առաջնորդ Միքայել եպս

Աջապահյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պողոսյանը եւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերադասուչ Գեորգ եպս Մարյանը:

Հանձնախումբը, որական եզրակացություն տալով ներկայացված վարդապետական թեզին, արժանի համարեց Տաճատ արքեպիսկոպոսին ներկայացնելու մասնավոր վարդապետության աստիճանի տվելության:

Առաջիկա օրերին, Ն. Ս. Ս. Տ. Փարեգին Բ Շայրագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, հայր Տաճատը, ավանդության համաձայն, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվելության հատուկ արարողությամբ կատանա մասնավոր վարդապետության աստիճան:

ՇՈՐԱՅԱՆ ԲՎՈՅՎԱՆՆԵՐԻ ՎՇԽԱՐԸ

Սկիզբը՝ թիվ 14-17

Ինչպես տարեւ պիտի տեսնեք, հայրենագրությունը Հովհ. Հիրազի քառյակներում հայ խորհրդային բանաստեղծի համար ներկա իրողություն է, իսկ կենտրոնաձիգ թեման՝ հայապահպանությունը, հայրենասպանությունը ու հայրենասիրությունը՝ իրականության վերաձեւելու գերխնդիր ու նպատակի գեղարվեստական մարմնավորում:

Անձամբ ապրելով հայրենագրության ցավը՝ Հովհ. Թումանյանն ու Ե. Չարենցն իրենց քառյակներում ու մյուս ստեղծագործություններում համեմատաբար քիչ ու զուսպ են արտահայտվել նրա մասին: Ու թեւ ժողովրդական խաղիկների, քույրական հայրենների, արքայական քառյակների, թումանյանական ու չարենցյան քառյակների պես բազմաթեմա են շիրազյան տարաբնույթ քառյակները, իր մյուս բանաստեղծությունների նման՝ խոհափիլիսոփայական, հավատապատում, հայրենապատում, մայրապատում, անգամ լուսնապատում ու սիրապատում քառյակներում միշտ եւ ամենուր, ինչպես տարեւ պիտի տեսնեք, առկա են նույն գերխնդիր սեւեռն ու նպատակային արծարծումները նրա փոխաբերություններում կամ համեմատություններում: Թեւե հեղինակն ինքը ձեռնակառնել թեմատիկ բաժանում կատարել է, սակայն ակնհայտ են ներթափանցումները: Արդեն 1958 թ. լույս տեսած «Ջնար Հայաստանի» առաջին գրքում հանդիպում են սիրո երկնակի հարցապարում արտահայտող այդպիսի քառյակներ, ինչպես՝

Սեւ աչքերիդ եւ գերի,
Սեւ Մասիսի պես գերի,
Նա կազատվի ուշ չե՛ս շուտ՝
Ես հավիտյան քեզ գերի:
Հիրազ Հ. Ջնար Հայաստանի, Եր., 1958, էջ 392

3. «Յոթնապատում» գրքի քառյակներից մեկն ունի 1940 թվագրումը: Եթե ճիշտ է այդ թվագրումը, ապա մինչ այդ բանաստեղծն արդեն գրած պիտի

լինեւ լուրջ արժեք ներկայացնող քառյակների մի ուղղակի քանակություն, որը նրան սեփական ստեղծագործությունն այդպես արժեւորելու հիմք պիտի տար: Սակայն այդ քառյակի դիտարկումը որոշ իմաստով կասկածելի է դարձնում նրա թվագրումը, որովհետեւ այստեղ ակնարկված «խոր» քառյակները, մեր խորին համոզմամբ, գրվել են ավելի ուշ շրջանում՝ առնվազն մեկուկես տասնամյակ հետո:

Դիտենք այդ քառյակը.

Չորս տողակի այս գառներս խոյրել եմ՝
թե խոր նայես,
Թե խոր նայես արծիվի՝ պես, ո՛չ թե որպես
լոր նայես,
Ա՛խ, քառյակ է իմ ազգն էլ դեռ, բայց
նուկն պես խտացված,
Ա՛խ, չէ, ես դեռ Նարեկը չեմ, ես դեռ ի՛նչ եմ,
որ նայես:
Հիրազ Հ. Յոթնապատում, «Սովետական գրող» հրատ., Եր., 1977, էջ 72

Այս քառյակը, որ 1981 թ. «Երկերի» առաջին հատորում չի դրվել, հետաքրքրական է մի քանի առումներով:

Նախ՝ կարելի է ասել, որ մինչ այդ, այսինքն՝ մինչեւ 1940 թվականը գրած շիրազյան քառյակները ոչ թե «լորի», այլ անգամ «արծիվի» աչքով «խոր» նայելու դեպքում էլ «գառներ» են եւ ոչ թե «խոյրեր», ինչպես հավատացած է եղել հեղինակը: Սակայն լավագույն քառյակներ նա իսկապես էլ գրել է 1950-70-ական թվականներին:

Երկրորդ՝ կարելու ենք համարում քառյակի մեջ մտնել եւ զգացմունքի կենտրոնացումն ու «ուկուկ պես խտացում» համարելը եւ հայ ազգի հետ համեմատելը:

Եվ երրորդ կարելու միտքը, որ առկա է քառյակի չորրորդ տողում, Նարեկի սեծուկությունը ճանաչելը, նրա բարձրության ու խորությանը ձգտել-հասնելու բանաստեղծի պատրաստակամությունն է՝

Շարունակությունը՝ էջ 7

